

յացած է թէ Ազամին գլուխը Գողգոթայի մէջ թաղուած է և Յիսուսի աստուածային արեան մէկ կաթիլը Գողգոթայի ապառաժին ճեղքուածքէն վազած է առաջին մեղաւոր մարդուն գլխուն վրայ, լուալու համար անոր մեղքերը (Bar. gd. էջ 85) (*):

3. — Աբրահամու զոհին եւ Յակոբ նահապետին աւանդութիւնները Գողգոթայի մէջ. — Ըստ աւանդութեան, Գողգոթայի մէջ էր որ Աբրահամ հանդիպեցաւ Մելքիսեդեկին որմէ օրհնուեցաւ իր պատարագներով (**), իբր օրինակ խաչին վրայ կատարուած անմահ պատարագին, որով օրհնուեցան արարածները: Այս լեռան վրայ՝ Աբրահամ հանեց իր Իսահակ զաւակը՝ Աստուծոյ պատարագ մատուցանելու համար, եւ Սարեկայ ծառէն կախուած գտաւ խոյը, ապապոյց միածին Որդւոյն Աստուծոյ, որ Խաչափայտին վրայ կախուեցաւ (***) : Հոս էր որ երեւցաւ Յակոբ նահապետին սանդուխը, որուն գլուխը Տէրը կար, հրեշտակները կ'իջնէին և մարդիկ կ'ելլէին, գաղափարը՝ սուրբ խաչին՝ որուն վրայ մեր Տէրը կապուեցաւ և բացաւ արքայութեան ճանապարհը, որով Ազամայ զաւակները երկինք կ'ելլեն (****) (Հան. էջ 200):

(*) Beauvais ի (Շրանսա) մայր եկեղեցւոյն Ս. կուսի մասրան մէջ, ԺԳ. դարու ապակեկարի մը վարդազարդին մէջ խաչելութեան պատկերազրուքին մը կը գտնուի, այդ պատկերին համաձայն Ազամ որ թաղուած էր խաչին ստորոք՝ ամբողջութեամբ դուրս կ'ելլէ գերեզմանէն, ձախ ձեռնով կը բռնէ ոսկեղէն բաժակ մը, ուր կը թափուի Յիսուս Քրիստոսի ոսկերէն կաթիլուած արիւնը (Alf. էջ 290):

(**) (ՇՌ. ԺԳ. 18. ՅԲԲ. է. 1):

(***) (ՇՌ. ԻԲ. 1-14):

(****) (ՇՌ. ԻԸ. 11-22):